Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլի ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

ՎԱՐԿ ԹԻՎ 9831-AM

Վարկային համաձայնագիր

(Հայաստանի ջրի եւ ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր.
1-ին փուլի նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ միջեւ

## ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ կնքված ստորագրման ամսաթվով, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ:

ՔԱՆԻ ՈՐ՝

Ա) Վարկառուն, համոզված լինելով սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված նախագծի իրագործելիության եւ առաջնահերթության հարցում (Նախագիծ), Բանկին խնդրել է տրամադրել վարկ՝ Նախագծի ֆինանսավորմանն աջակցելու համար, եւ

Բ) Վարկառուն նաեւ խնդրել է Զարգացման ֆրանսիական գործակալությանը (Համաֆինանսավորող) տրամադրել լրացուցիչ աջակցություն Նախագծի ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկառուի եւ Համաֆինանսավորողի միջեւ կնքվելիք համաձայնագրի (Համաֆինանսավորման Համաձայնագիր),

ՀԵՏԵՎԱԲԱՐ Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնեցին հետեւյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի Առդիրում) կիրառվում են եւ կազմում են սույն Համաձայնագրի մաս:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում օգտագործված մեծատառ եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Առդիրում դրանց վերագրված նշանակությունները:

## ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել յոթանասուն միլիոն չորս հարյուր հազար Եվրոյի (€70,400,000) չափով գումար, քանի որ այդ գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման (Վարկ) միջոցով՝ Նախագծի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

2.02. Վարկառուն կարող է ելքագրել Վարկի միջոցները սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի III բաժնի համաձայն:

2.03. Առաջնային վճարը կազմում է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսը (0.25%):

2.04. Պարտավորության վճարը կազմում է տարեկան Վարկի չելքագրված մնացորդի մեկ քառորդ տոկոսը (0.25%):

2.05. Տոկոսադրույքը բազային տոկոսադրույքն է՝ գումարած փոփոխական սպրեդը կամ այնպիսի դրույք, որը կարող է կիրառվել փոխարկումից հետո. ենթակա է Ընդհանուր պայմանների 3.02 (ե) բաժնին:

2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը եւ հուլիսի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը պետք է մարվի սույն Համաձայնագրի Ընդհանուր պայմանների 3.03 բաժնի եւ 3-րդ հավելվածի համաձայն:

## ՀՈԴՎԱԾ III. ՆԱԽԱԳԻԾԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Նախագծի եւ MPA ծրագրի նպատակներին հավատարիմ մնալու իր հանձնառության մասին: Այդ նպատակին հասնելու համար Վարկառուն նախագիծն իրականացնում է սույն Համաձայնագրի Ընդհանուր պայմանների V հոդվածի եւ 2-րդ հավելվածի դրույթների համաձայն:

## ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Համաֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համաֆինանսավորման վերջնաժամկետը 2026 թվականի մարտի 31-ն է:

## ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ. ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները բաղկացած են հետեւյալից.

ա) Համաֆինանսավորման համաձայնագիրը կնքվել եւ հանձնվել է, եւ կատարվել են դա ուժի մեջ մտնելու կամ Վարկառուի ելքագրումներ կատարելու իրավունքն իրացնելու բոլոր նախապայմանները (բացի սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց).

բ) ստեղծվել է Նախագծի Ղեկավար կոմիտե՝ Բանկի համար ընդունելի լիազորություններով եւ կազմով.

գ) Վարկառուի կողմից ստեղծվել է Նախագծի իրականացման խումբ՝ Բանկի համար ընդունելի լիազորություններով եւ կազմով, եւ

դ) Վարկառուի կողմից ընդունվել է Նախագծի գործառնական ձեռնարկ՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ եղանակով:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը ստորագրման օրվանից հարյուր ութսուն (180) օր հետո է:

## ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ. ՀԱՍՑԵՆԵՐ

6.01. Վարկառուի ներկայացուցիչը նրա ֆինանսների նախարարն է:

6.02. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակների համար՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան 1

Երեւան 0010

Հայաստանի Հանրապետություն, եւ

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքսիմիլ՝ Էլ. փոստ՝

374-11-800132 secretariat@minfin.am

6.03. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակների համար՝

ա) Բանկի հասցեն է՝

Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ

Էյչ փողոց 1818,

Հյուսիսարեւմտյան

Վաշինգտոն, Կ.Շ. 20433

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, եւ

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝ Ֆաքսիմիլ՝

248423 (MCI) կամ 1-202-477-6391

64145 (MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է ստորագրության ամսաթվի դրությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**____________________________ կողմից՝**

**Լիազոր ներկայացուցիչ**

**Անուն՝ __________________________**

**Պաշտոն՝ _________________________**

**Ամսաթիվ՝ _________________________**

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ**
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ**

**____________________________ կողմից՝**

**Լիազոր ներկայացուցիչ**

**Անուն՝ __________________________**

**Պաշտոն՝ _________________________**

**Ամսաթիվ՝ _________________________**

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

### Նախագծի նկարագրությունը

Նախագծի նպատակն է ապահովել արդյունավետ եւ ֆինանսապես կայուն ոռոգման եւ անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման ծառայությունների բարելավված հասանելիություն Հայաստանի ընտրված տարածքներում:

Նախագիծը MPA ծրագրի փուլն է եւ բաղկացած է հետեւյալ մասերից.

**<u>Մաս 1. Ջրային ոլորտի բարեփոխումներ եւ ինստիտուցիոնալ ամրապնդում</u>**

1.1. *Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության եւ պլանավորման ամրապնդում*.

ա) Մշակում. i) Ջրի համապարփակ ազգային ռազմավարություն. ii) Ոռոգման տասը տարվա ազգային ռազմավարություն. iii) Ջրամատակարարման եւ ջրահեռացման ազգային ռազմավարություն. եւ iv) Ոռոգման ազգային գլխավոր պլան՝ գնահատելու նախնական տեխնիկական իրագործելիությունը, տնտեսական կենսունակությունը, շրջակա միջավայրի կայունությունը, սոցիալական ներառականությունը եւ հնարավոր միջամտությունները՝ ջրային ճգնաժամի մեջ գտնվող տարածքներում կլիմայական ռիսկերը նվազեցնելու նպատակով:

բ) Ջրային ոլորտի կառավարման համար Վարկառուի բոլոր առկա իրավական շրջանակների վերանայում, ներառյալ՝ Ջրային օրենսգիրքը, «Ջրօգտագործողների ընկերությունների եւ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքը եւ հարակից այլ օրենսդրական ակտեր, եւ ջրային ոլորտի կառավարման օրենսդրությունը բարելավելու համար առաջարկությունների տրամադրում:

1.2. *Ոռոգման ոլորտի կառավարման եւ ծառայությունների մատուցման*

*բարելավում* .

ա) Ջրային կոմիտեի (ՋԿ) եւ Ջրամատակարար գործակալության (Ջրառ) գործունեությունը բարելավելու նպատակով ինստիտուցիոնալ բարեփոխումների համապարփակ ծրագրի իրականացում՝ ապահովելով, ի թիվս այլնի՝

i) տեխնիկական աջակցություն կազմակերպչական աուդիտի կամ ինստիտուցիոնալ գնահատման համար, ներառյալ՝ ՋԿ-ի եւ Ջրառ-ի ներքին կառուցվածքի գենդերային եւ ներառական ասպեկտները, եւ/կամ աջակցություն Վարկառուի ջրային նոր գործակալության ստեղծման եւ գործարկման համար,

ii) հետագա տեխնիկական աջակցություն՝ ՋԿ-ի, Ջրառ-ի եւ տեղում աշխատող անձնակազմի ներքին կարողությունների զարգացման համար,

iii) սարքավորումներ եւ ակտիվների կառավարման համակարգ, որը ներառում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) վրա հիմնված կառավարման տեղեկատվական համակարգը,

iv) տեխնիկական աջակցություն՝ ազգային ակտիվների գույքագրման իրականացման, Ջրառ-ի մեխանիկական բազայի բարելավման, ամբարտակների անվտանգության գնահատման, ՋԿ-ի եւ Ջրառ-ի ինստիտուցիոնալ գնահատման եւ համապատասխան ուսումնական ճամփորդությունների կազմակերպման համար, եւ

v) ՀԾԿՀ-ում հատուկ ջրային վարչության ստեղծում:

բ) i) Ակտիվների պահպանման հիմնադրամի ստեղծում, որը նախատեսված է Նախագծի շրջանակներում բոլոր նոր արդիականացված ոռոգման սխեմաների շահագործման եւ պահպանման համար,

ii) մեծածավալ ոռոգման սակագների եւ ոռոգման ծառայությունների վճարների վերանայված մեթոդաբանության մշակում, որը համապատասխանում է «Ջրօգտագործողների ընկերությունների եւ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքին, այդ թվում՝ ոռոգման

մեծածավալ ոռոգման ջրի մատակարարման ծախսերի եւ մատչելիության եւ վճարելու պատրաստակամության ուսումնասիրությունների ելակետային վերլուծության, ինչպես նաեւ սակագնի մեթոդաբանության նախագծման միջոցով, եւ

iii) սակագնային պլանի մշակում եւ ներդրում՝ հաղորդակցման ռազմավարության միջոցով, առնվազն վեց (6) Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) իրազեկման համար, որը ներառում է փուլային մոտեցում՝ աջակցելով այն ֆերմերներին, որոնք չեն կարող իրենց թույլ տալ լիարժեք շահագործման եւ պահպանման ծախսերի փոխհատուցման վճարները:

գ) Առնվազն վեց (6) Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) կարողությունների զարգացման ծրագրի իրականացում՝ դրանց իրավական, վարչական, տեխնիկական, կառավարչական եւ ֆինանսական կարողություններն ամրապնդելու նպատակով՝ վերապատրաստման եւ ապրանքների մատակարարման միջոցով, ներառյալ, ի թիվս այլնի՝

i) Ա) ՋՕԸ-երի եւ նրանց վարչական խորհուրդների ինստիտուցիոնալ կամ կառավարման կարողությունների ամրապնդում. Բ) մասնակցային կառավարման ընդլայնում. Գ) ՋՕԸ-երի վարչական խորհուրդների անդամների ընտրությունների բարելավում եւ որոշումների մասնակցային կայացում. եւ Դ) ջրօգտագործողների՝ ջրի արդյունավետ օգտագործման վերաբերյալ իրազեկության բարձրացում.

ii) Կարողությունների ամրապնդում՝ վերապատրաստման, սարքավորումների արդիականացման, աշխատանքային պայմանների բարելավման եւ բուհերում եւ տեխնիկումներում կանանց եւ երիտասարդ շրջանավարտների համար նպատակաուղղված իրազեկման ծրագրերի իրականացում՝ նրանց ջրային ոլորտում պրակտիկայի եւ աշխատանքի հնարավորությունների մասին իրազեկելու նպատակով, երիտասարդ օգտատերերի եւ կին թեկնածուների խրախուսում եւ առաջադրում ընտրություններում՝ կանանց եւ երիտասարդ մասնագետներին ղեկավար եւ

տեխնիկական պաշտոններում ներգրավելու նպատակով, հատկապես հեռավոր շրջաններում.

iii) ջրային ռեսուրսների կառավարման բարելավում՝ ԱՏՀ ջրի հաշվառման համակարգի արդիականացման միջոցով, տարեկան ջրային պլանավորման իրականացում, ջրաչափերի տեղադրում եւ անցում ծավալային ոռոգման վճարներին. եւ

iv) ջրային կառավարման եւ չափման սարքերի, ՏՏ սարքավորումների, տրանսպորտային միջոցների, գրասենյակային կահույքի, տեխնիկական գործիքների եւ տեխնիկայի տրամադրում.

v) Ջրի խնայողության եւ կառավարման տեխնոլոգիաներին աջակցության տրամադրում՝ ջերմային սթրեսը մեղմելու, կլիմայական ռիսկերը նվազեցնելու եւ կլիմայի հարմարվողականության նպատակով ջրի արդյունավետությունը բարձրացնելու համար՝ ապահովելով՝ Ա) ժամանակակից կլիմային դիմակայուն ֆերմային ոռոգման համակարգեր, Բ) որոշումների կայացման աջակցման համակարգեր բջջային հավելվածների միջոցով, եւ Գ) թվային խորհրդատվական եւ վաղ նախազգուշացման ծառայություններ՝ կլիմայի եւ եղանակային տվյալների հասանելիությունը բարելավելու համար, ներառյալ՝ ուսուցումը՝ աջակցելու տեղեկացված որոշումների կայացմանը եւ կլիմայի դիմակայունությանը, երկխոսություն ֆերմերների հետ, եւ ՋՕԸ-երի որոշումների կայացմանը երիտասարդների եւ կանանց մասնակցությունը խթանելու համար՝ մասնակցության խոչընդոտների վերանայում, գործողություններ առաջարկելու եւ իրազեկման արշավներ եւ հմտությունների զարգացման ծրագրեր իրականացնելու համար՝ կանանց եւ երիտասարդների մասնակցություն կառավարման, շահագործման եւ պահպանման գործառույթներում:

դ) Ոռոգման ջրի հաշվառման եւ հարմարեցման ազգային կենտրոնի ստեղծում եւ գործարկում՝ ջրի եւ ոռոգման կառավարումը բարելավելու նպատակով, ի թիվս այլնի՝

i) Մանրամասն գործողությունների ծրագրի, տեխնիկական դասընթացների, վերապատրաստման, ուսուցողական այցերի միջոցով.

ii) ստորերկրյա ջրերի դիտացանցերի կարողությունների զարգացման միջոցով.

iii) հողի եւ ջրի հեռազննման գնահատումների չափորոշման համար հետազոտությունների եւ մշակումների իրականացման միջոցով.

iv) վեբ հարթակների եւ բջջային հավելվածների համար ծրագրերի մշակման միջոցով.

v) ԱՏՀ-ի վրա հիմնված ոռոգման կառավարման համակարգի արդիականացման միջոցով.

vi) հեռազննման վրա հիմնված ջրի եւ հողի մշտադիտարկման համակարգի մշակման միջոցով.

vii) ցամաքային տվյալների հավաքագրման սարքավորումների ապահովման միջոցով, ինչպիսիք են հողի խոնավությունը, ջրի որակի սենսորները, ստորերկրյա ջրերի մակարդակի սենսորները, հեռակառավարվող տեսախցիկները, ավտոմատացված եղանակային կայանները, կենտրոնների եւ հարակից օբյեկտների կառուցման միջոցով.

viii) թվային ենթակառուցվածքի, ներառյալ՝ պահեստավորման, հաղորդակցության ենթակառուցվածքի եւ հեռահար մշտադիտարկման եւ հսկողության համակարգերի ստեղծման միջոցով. եւ

ix) Արարատյան արտեզյան ավազանում ստորերկրյա ջրերի դիտահորերի վերականգնման միջոցով:

**<u>Մաս 2. Գյուղական ջրամատակարարման եւ ջրահեռացման բարելավում</u>**

2.1. *Ինստիտուցիոնալ ամրապնդում, կարողությունների զարգացում եւ կարգավորող բարեփոխումներ*

ա) Կլիմայի փոփոխության հետ կապված երաշտների, ջրհեղեղների եւ աննախադեպ տապի ակնկալիքով ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների (ՋՋ) մատուցման եւ ընդլայնման համար ազգային, մարզային եւ տեղական մակարդակներում ինստիտուցիոնալ կարողությունների ձեւավորում՝ *ի թիվս այլնի*՝

i) *մարզերում* գյուղական ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների (ԳՋՋ) վիճակի վերաբերյալ ելակետային տեղեկատվության հավաքագրման միջոցով.

ii) Չսպասարկվող տարածքների համար ծառայությունների բարելավման եւ իրականացման գործողությունների ծրագրի պատրաստում, ներառյալ՝ ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների եւ բարենպաստ միջավայրի բարելավման միջոցով.

iii) ջրամատակարարման եւ ջրահեռացման (ՋՋ) ցուցանիշների ոլորտային մշտադիտարկման շրջանակի մշակման միջոցով,

iv) ՋԿ-ում մշտադիտարկման եւ վերահսկման գործիքների ներդրման միջոցով՝ ոլորտի վերահսկողությունը բարելավելու նպատակով.

v) հասարակության բավարարվածության բարձրացման համար ջրամատակարարման ծառայությունների տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով.

vi) սոցիալ-մշակութային եւ գենդերային գնահատման իրականացման միջոցով՝ ուսումնասիրելու, թե ինչպես են այդ չափորոշիչները հասցեագրված ազգային քաղաքականություններում, ռազմավարություններում եւ ծրագրերում.

vii) կարողությունների զարգացման ռազմավարության մշակման միջոցով՝ գյուղական ՋՋ-ի պլանավորման, իրականացման եւ կառավարման ամրապնդման համար.

viii) ուսուցման եւ տեղեկատվության, կրթական եւ տեղեկատվական ծրագրերի նախագծման եւ մատուցման միջոցով, որը ներառում է վերապատրաստման գործունեություն՝ Ա) ՋՋ-ի համակարգերի պլանավորման, մշակման, կառուցման եւ կառավարման համար, Բ) ԳՋՋ-ի կայուն ծառայությունների մատուցման համակարգի գործառնությունների եւ տեխնիկական սպասարկման համար, Գ) գնումների ընթացակարգերի եւ գործելակերպի համար, Դ) ֆինանսական հաշվառման եւ հաշվետվության համար. եւ Ե) ԳՋՋ համակարգերի մշտադիտարկման եւ գնահատման համար.

ix) Գյուղական սանիտարական տեխնոլոգիաների ազգային կատալոգի եւ ՋՋ ծառայությունների մատուցման մոդելների մշակման համար, ներառյալ՝ մասնավոր հատվածի տարբերակների գնահատումն ապագա կիրառման համար.

x) Վարկառուի հետ համաձայնեցված առաջնահերթության չափանիշներին համահունչ բոլոր *մարզերի* չսպասարկվող տարածքների համար ԳՋՋ-ի գնահատման եւ ներդրումային պլանի մշակման համար. եւ

xi) Չսպասարկվող տարածքների համար ԳՋՋ-ի գործողությունների ծրագրի մշակում, ներառյալ՝ ինստիտուցիոնալ բարելավումները եւ մասնավոր հատվածի մասնակցության տարբերակները:

բ) ՋՋ-ի սակագների բարեփոխման համապարփակ ծրագրի մշակում եւ իրականացում՝ ՋՋ-ի ծախսերի եւ մատչելիության եւ վճարելու պատրաստակամության ելակետային վերլուծություն իրականացնելու միջոցով. պետական սուբսիդիաների վերաբերյալ առաջարկությունների տրամադրում ջրօգտագործողների համար, որոնք ի վիճակի չեն լիարժեք շահագործման եւ պահպանման ծախսերի փոխհատուցման վճարներ կատարել. եւ սակագների մեկնարկային պլանի մշակում եւ իրականացում՝ համապատասխան

տեղեկատվական ռազմավարությամբ՝ բարձրացված սակագներից տուժած համայնքներին իրազեկելու եւ վարքագծի փոփոխության եւ մարքեթինգային արշավի համար:

գ) Մասնավոր կոնցեսիոն պայմանագրային պայմանավորվածությունների ներքո Վարկառուի կատարողականի բարելավում՝ պետական-մասնավոր գործընկերության պայմանագրի նպատակները, ձեռքբերումները եւ պարտադիր սահմանափակումները, ինչպես նաեւ նշված պայմանագրի տեխնիկական, ինստիտուցիոնալ, առեւտրային, ֆինանսական եւ իրավական ասպեկտները վերանայելու համար տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով:

2.2. *Տեխնիկատնտեսական հիմնավորումների ուսումնասիրություններ եւ ենթակառուցվածքային ներդրումներ*

Իրականացնել՝ ա) տեխնիկատնտեսական հիմնավորումների ուսումնասիրություններ եւ մանրամասն մշակել ինժեներական նախագծեր ՋՋ համակարգերի ներդրման համար, որոնք կդիմակայեն կլիմայի փոփոխության արդյունքում հաճախականացած երաշտներին, ջրհեղեղներին եւ աննախադեպ տապին. եւ բ) ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավում (Ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավում)՝ ամենաառաջնահերթ չսպասարկվող բնակավայրերի համար, ներառյալ՝ ջրային ցանցերի կառուցումը, ինչպիսիք են կենցաղային միացումները եւ միացումները դպրոցներին եւ առողջապահական հաստատություններին, ջրաչափերի եւ ջրի մաքրման համակարգերին:

## <u>Մաս 3. Ոռոգման ենթակառուցվածքների եւ համակարգի կառավարման արդիականացում</u>

3.1. *Կլիմայական դիմացկուն ոռոգման ենթակառուցվածքների եւ համակարգի կառավարման արդիականացում*

Իրականացնել՝ ա) տեխնիկատնտեսական հիմնավորումների ուսումնասիրություններ եւ/կամ նախնական նախագծեր, ներառյալ՝ տնտեսական եւ ֆինանսական վերլուծությունը, շրջակա միջավայրի եւ սոցիալական ազդեցության գնահատականները հետեւյալ ոռոգման համակարգերի վերականգնման եւ արդիականացման համար՝ Ստորին Հրազդան, Արզնի-Շամիրամ, Կոտայք, Լոռի, Դեբետավան, եւ հետեւյալ պոմպակայանների համար՝ Մխչյան եւ Ռանչպար. բ) Ընտրված ոռոգման համակարգերի վերականգնման կամ արդիականացման համար կառուցում (Ընտրված ոռոգման համակարգերի վերականգնում կամ արդիականացում). եւ գ) Որոտան-Արփա-Սեւան փոխադրման թունելի տեխնիկական եւ ինստիտուցիոնալ գնահատում:

3.2. *Վերահսկիչ հսկողության եւ տվյալների հավաքագրման ներդրում (ՍԿԱԴԱ)*

ա) Կլիմայի դիմացկունությունը բարձրացնելու նպատակով ջրանցքների եւ խողովակաշարերի համակարգերից ոլորտային տվյալների հավաքագրման, մշակման եւ կառավարման հետ կապված գործողությունների ծրագրի իրականացում, ներառյալ՝ i) կլիմայի փոփոխության հետեւանքով առաջացած կրիտիկական հոսքերի եւ ջրի մակարդակների իրական ժամանակում ճշգրիտ չափում. ii) տվյալների փոխանցում. iii) տվյալների համակարգում եւ արխիվացում. iv) իրական ժամանակի եւ պատմական տվյալների հեշտ հասանելիության ապահովում. v) սարքավորումների եւ ծրագրային ապահովման ստանդարտացում. vi) ՍԿԱԴԱ տեխնիկների թիմի վերապատրաստում՝ տեղադրման, անսարքությունների վերացման եւ վերանորոգման համար. (vii) լավ սարքավորված ՍԿԱԴԱ կենտրոնի ստեղծում՝ պահեստամասերով, փորձարկման սարքավորումներով եւ դիագնոստիկ գործիքներով. եւ viii) տվյալների անվտանգության ապահովում եւ պահուստավորման համակարգի ստեղծում:

բ)	Գլխամասային դարպասների սահմանափակ հեռահար մեխանիկական կառավարման եւ մշտադիտարկման ապահովում:

**<u>Մաս 4.	Նախագծի կառավարում</u>**

Նախագծի իրականացման խմբին (ՆԻԽ) աջակցության տրամադրում՝ Նախագծի իրականացման նպատակով, ներառյալ՝ գնումների, ֆինանսական կառավարման, բնապահպանական, սոցիալական, աուդիտի եւ ԱՀՊ-ների անկախ ստուգման համար. ելակետային եւ Նախագծի ավարտի հետազոտությունների նախագծում, իրականացում եւ հաշվետվություն. գնահատման ուսումնասիրությունների (*նախատեխնիկատնտեսական հիմնավորումների ուսումնասիրությունների եւ տեխնիկատնտեսական հիմնավորումների ուսումնասիրությունների*) եւ մանրամասն ինժեներական նախագծերի տեխնիկական փաստաթղթերի պատրաստում. շինարարության վերահսկողություն. եւ կարողությունների զարգացում, ներառյալ՝ քաղաքացիների ներգրավվածության ուսուցման հմտությունները ՆԻԽ-ի անձնակազմի համար:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

## Նախագծի իրականացում

**Բաժին I.** **Իրականացման միջոցառումներ**

**Ա.** **Ինստիտուցիոնալ պայմանավորվածություններ**

1. Վարկառուն Նախագծի իրականացման ընդհանուր պարտականությունները վերապահում է Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը (ՏԿԵՆ) կից ՋԿ-ին, ներառյալ՝ ՋԿ-ի ենթակայության ներքո գործող լիազոր մարմնի նշանակումը՝ Վարկառուի անունից պայմանագրեր կնքելու նպատակով:

2. Վարկառուն ստեղծում եւ դրանից հետո Նախագծի իրականացման ողջ ընթացքում պահպանում է Նախագծի Ղեկավար կոմիտե, որը ա) նախագահում է Վարկառուի փոխվարչապետը. բ) անհրաժեշտության դեպքում ներառում է Ֆինանսների նախարարության, ՏԿԵՆ-ի, ՋԿ-ի, Էկոնոմիկայի նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության եւ այլ համապատասխան ոլորտային նախարարությունների, գերատեսչությունների եւ տեղական եւ տարածաշրջանային մարմինների ներկայացուցիչների. եւ գ) պատասխանատու է բարձր մակարդակի ռազմավարական որոշումների կայացման, միջգերատեսչական համագործակցության եւ համակարգման աջակցման, ինչպես նաեւ Նախագծի ընդհանուր առաջընթացի վերահսկման եւ մշտադիտարկման համար:

3. Վարկառուն ստեղծում եւ դրանից հետո Նախագծի իրականացման ողջ ընթացքում պահպանում է Նախագծի իրականացման խումբ (ՆԻԽ) ՋԿ-ի ենթակայության ներքո, որը ա) պատասխանատու է Նախագծի իրականացման եւ հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաեւ Տարեկան աշխատանքային պլանը նախապատրաստելու համար. բ) ղեկավարում է ծրագրի ղեկավարը. եւ գ) ներառում է Նախագծի Մասերի համակարգողների, ոռոգման ինժեներների,

ջրամատակարարման եւ ջրահեռացման ինժեներների, բնապահպանության եւ սոցիալական ոլորտի մասնագետների, այդ թվում՝ առնվազն բնապահպանության մասնագետի, սոցիալական ոլորտի մասնագետի, աշխատանքի առողջության եւ անվտանգության մասնագետի, գենդերային ոլորտի մասնագետի եւ համայնքի իրազեկման մասնագետի, ֆինանսական կառավարման մասնագետների, գնումների մասնագետների, եւ ԱՏՀ եւ հեռազննման մասնագետի եւ Նախագծի գործառնական ձեռնարկով նախատեսված այլ մասնագետների:

**Բ. Նախագծի գործառնական ձեռնարկ**

1. Վարկառուն ընդունում եւ պահպանում է Նախագծի գործառնական ձեռնարկ (ՆԳՁ)՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ եղանակով, այնուհետեւ Նախագծի իրականացման ողջ ընթացքում Նախագիծն իրականացնում է նշված ձեռնարկում ներառված դրույթներին համապատասխան. ՆԳՁ-ն ներառում է՝

ա) մանրամասն ինստիտուցիոնալ, վարչական, ֆինանսական, գնումների, հատկացումների, տեխնիկական, գործառնական եւ հաշվետվողական միջոցառումները եւ ընթացակարգերը՝ Նախագծի իրականացման համար.

բ) Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշները.

գ) ՆՂԿ-ի մանրամասն կազմը, ներկայացվածությունը եւ նիստերի հաճախականությունը.

դ) ՆԻԽ-ի մանրամասն կազմը, դերերը, պարտականությունները եւ ընդհանուր գործառույթները.

ե) բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավման ընթացակարգերը.

զ) ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավման մանրամասն համապատասխանության չափանիշները, ժամկետները եւ պայմանները, ընտրության եւ հաստատման գործընթացները եւ իրականացման

ընթացակարգերը.

է) ընտրված ոռոգման համակարգերի վերականգնման կամ արդիականացման մանրամասն համապատասխանության չափանիշները, ժամկետները եւ պայմանները, ընտրության եւ հաստատման գործընթացները եւ իրականացման ընթացակարգերը.

ը) Անկախ ստուգման գործակալի տեխնիկական առաջադրանքը եւ պահանջվող որակավորումները.

թ) ստուգման արձանագրությունը, որը պարունակում է տեխնիկական չափորոշիչներ եւ ընթացակարգեր՝ տվյալների եւ այլ ապացույցների մշտադիտարկման, հաշվետվության եւ ստուգման համար, որոնք հավաստում են ԱՀՊ-երի ձեռքբերումները.

ժ) Նախագծի բնապահպանական եւ սոցիալական ասպեկտների կարողությունների զարգացման պլանը, եւ

ժա) Ֆինանսական կառավարման ձեռնարկը:

2. Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնություն է տալիս, Վարկառուն չի փոփոխում, չեղյալ հայտարարում ՆԳՁ-ի որեւէ դրույթ կամ հրաժարվում դրանից կամ չի թույլատրում փոփոխել, չեղյալ հայտարարել ՆԳՁ-ի որեւէ դրույթ կամ հրաժարվել դրանից:

3. Նշված ձեռնարկում նշված պայմանավորվածությունների եւ ընթացակարգերի եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ որեւէ հակասության դեպքում գերակայում է վերջինս:

**Գ. Տարեկան աշխատանքային պլան**

1. Վարկառուն ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային տարվա հոկտեմբերի 30-ը, Բանկի քննարկմանը ներկայացնելու համար պատրաստում եւ Բանկին է տրամադրում գործողությունների աշխատանքային պլանի նախագիծը, որը հաջորդ օրացուցային տարվա ընթացքում առաջարկվում է ընդգրկել

Նախագծում, որը ներառում է Նախագծի բոլոր գործողությունները եւ ծախսերը, որոնք հաջորդ օրացուցային տարում առաջարկվում են ընդգրկել Նախագծում, ներառյալ՝ բոլոր ծախսերի ֆինանսավորման աղբյուրների եւ սույն Հավելվածի 1.Ձ բաժնի դրույթների համաձայն ձեռնարկված կամ նախատեսված բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցության կառավարման միջոցառումների հստակեցումը:

4. Վարկառուն Բանկին ողջամիտ հնարավորություն է ընձեռում վերանայելու առաջարկված յուրաքանչյուր պլան եւ բյուջե, այնուհետեւ ապահովում է, որ Նախագիծն իրականացվի պատշաճ ջանասիրությամբ եւ արդյունավետությամբ՝ համաձայն Բանկի կողմից հաստատված աշխատանքային պլանի (Տարեկան աշխատանքային պլան):

**Դ. Ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավումներ**

1. *Ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավումներ.* Նախագծի 2.2(բ) մասն իրականացնելիս Վարկառուն ապահովում է, որ Վարկի միջոցներից ֆինանսավորվող ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավումները համապատասխանեն ՆԳՁ-ում նշված չափանիշներին, որոնք ներառում են հետեւյալը.

ա) առաջարկվող ներդրման նպատակակետերը հետեւյալ *մարզերն են՝* Արարատ, Արագածոտն, Կոտայք, Շիրակ կամ Տավուշ.

բ) առաջարկվող ներդրումը հիմնված է Ներդրումային ծրագրով նախատեսված գործողությունների առաջնահերթության վրա.

գ) առաջարկվող ներդրումը բաղկացած է ջրային ցանցերի կառուցումից, որոնք փոքր լրացումներ կամ փոփոխություններ են առկա համակարգերում.

դ) առաջարկվող ներդրումը ներառում է կլիմայի դիմակայուն ինժեներական սկզբունքները. եւ

ե) առաջարկվող ներդրումը բացառում է այն գործողությունները, որոնք Ա)

չեն բավարարում Նախագծի բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլանով սահմանված պահանջները. Բ) հանգեցնում եմ նոր համակարգերի ստեղծմանը, որոնք օգտագործում են ԳԾ 7.50-ում նշված միջազգային ջրային ուղիների ջրերը կամ վտանգ են ներկայացնում այդ ջրերի աղտոտման համար. Գ) ունեն բարձր ռիսկային բնապահպանական կամ սոցիալական ազդեցություններ. եւ/կամ Դ) բացասական ազդեցություն կունենան ցանկացած կարեւոր բնական միջավայրի կամ մշակութային ժառանգության տարածքների վրա:

2. *Ընտրված ոռոգման համակարգերի վերականգնում կամ արդիականացում* Նախագծի 3.1(բ) մասն իրականացնելիս Վարկառուն պետք է ապահովի, որ Վարկի միջոցներից ֆինանսավորվող ընտրված ոռոգման համակարգերի վերականգնումը կամ արդիականացումը համապատասխանի ՆԳՁ-ում նշված չափանիշներին, որոնք պետք է ներառեն հետեւյալը.

ա) առաջարկվող ներդրումը պետք է հիմնված լինի առաջարկվող *տեխնիկապետեսական հիմնավորումների ուսումնասիրությունների* վրա, ներառյալ՝ տնտեսական եւ ֆինանսական վերլուծությունը, շրջակա միջավայրի եւ սոցիալական ազդեցության գնահատումը վերականգնման եւ/կամ արդիականացման համար, առաջարկվող ներդրումը պետք է լինի տեխնիկապես իրագործելի, ֆինանսապես եւ տնտեսապես կենսունակ եւ համապատասխանի ընտրված ոռոգման համակարգերի արդիականացման վերականգնման համար հատկացված բյուջեին.

բ) առաջարկվող ներդրումը պետք է ներառի նախագծեր, որոնք պատրաստվում են ՋՕԸ-երի մասնակցությամբ եւ հաստատվում են դրանց կողմից.

գ) առաջարկվող ներդրման նախագծում պետք է ներառված լինեն կլիմայի հարմարվողականության եւ վտանգի դիմակայունության սկզբունքները.

դ) առաջարկվող ներդրումը պետք է բաղկացած լինի Գլխամասերի

շահագործման եւ սպասարկման գործունեության, գլխավոր ջրանցքների շրջված սիֆոնների կարեւորագույն հատվածների, ջրատարների, երկրորդական եւ երրորդային ցանցերի (խողովակաշար կամ գծային), ջրի վերահսկման կամ բաշխման կետերի, սելավների, ջրհեղեղից պաշտպանության, հոսքի եւ/կամ ծավալային չափման կառույցների, աղբի հեշտ հեռացման եւ լվացման համար նախատեսված կառուցվածքների, կամուրջների, սպասարկման ճանապարհների, հարակից պոմպակայանների հետ կապված աշխատանքներից՝ նպատակ ունենալով բացահայտել տեխնոլոգիական առաջընթացները, որոնք կարող են արդիականացնել ընտրված համակարգերը (օրինակ՝ փոխակերպում պոմպայինից ինքնահոսի կամ անցում ինքնահոսից դեպի ճնշման տակ գտնվող խողովակաշարերի, ջրանցքի կողային կարգավորիչ ջրամբարների եւ/կամ այլ օժանդակ կառույցների կառուցում ). եւ

ե) առաջարկվող ներդրումը պետք է բացառի այն գործողությունները, որոնք՝ Ա) չեն կարող բավարարել Նախագծի բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլանով սահմանված պահանջները. Բ) հանգեցնում են նոր համակարգերի ստեղծմանը, որոնք օգտագործում են ԳՔ 7.50-ում նշված միջազգային ջրային ուղիների ջուրը կամ վտանգ են ներկայացնում այդ ջրերի աղտոտման համար, Գ) ունեն բարձր ռիսկային բնապահպանական կամ սոցիալական ազդեցություններ. եւ/կամ Դ) բացասական ազդեցություն կունենան ցանկացած կարեւոր բնական միջավայրի կամ մշակութային ժառանգության տարածքների վրա:

**Ե. Անկախ ստուգման գործակալ**

1. Նախագծի 1.2(գ) մասի իրականացման նպատակով Վարկառուն՝

ա) ոչ ուշ, քան 2030 թվականի հունիսի 30-ը, ներգրավում եւ դրանից հետո Նախագծի իրականացման ընթացքում մշտապես պահում է Անկախ Ստուգման Գործակալ՝ որակավորումներով եւ փորձով եւ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքով՝ տվյալներն ու այլ ապացույցներ ստուգելու նպատակով, որոնք հաստատում են մեկ կամ մի քանի ԱՀՊ-ների ձեռքբերումը,

ինչպես նշված է 2-րդ հավելվածի հավելումի աղյուսակում, եւ համապատասխանում է սույն Համաձայնագրի յուրաքանչյուր Վարկառուի համար, եւ Վարկառուին առաջարկում է համապատասխան վճարումներ կատարել յուրաքանչյուր ԱՀՊ-ի համար՝ համաձայն ՆԳԶ-ում սահմանված ստուգման արձանագրության. եւ

բ) պահանջում է Անկախ ստուգման գործակալից՝ i) համաձայն ստուգման արձանագրության իրականացնելու ԱՀՊ-ների ձեռքբերման մակարդակի ստուգում. եւ ii) պատրաստելու եւ Վարկառուին տրամադրելու համապատասխան ԱՀՊ-ների ձեռքբերումների կարգավիճակի վերաբերյալ հաշվետվությունները:

2. Այն դեպքում, երբ սույն բաժնի 1(ա) պարբերության համաձայն ստուգման ծառայությունների անհրաժեշտություն կա մինչեւ Անկախ ստուգման գործակալի նշանակումը, հաստատում է համապատասխան միջանկյալ պայմանավորվածություն, որն ընդունելի է Բանկի համար եւ Բանկի կողմից գրավոր հաստատվել է ԱՀՊ-ների ձեռքբերումը ստուգելու համար:

**Զ. Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ**

1. Վարկառուն պետք է ապահովի, որ Նախագիծն իրականացվի Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին համապատասխան՝ Բանկի համար ընդունելի ձեւով:

2. Չսահմանափակելով վերը նշված 1-ին պարբերությունը՝ Վարկառուն ապահովում է, որ Նախագիծն իրականացվի Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլանի (ԲՍՀՊ) համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձեւով: Այդ նպատակով Վարկառուն պետք է ապահովի, որ՝

ա) ԲՍՀՊ-ում նշված միջոցառումներն ու գործողություններն իրականացվեն պատշաճ ջանասիրությամբ եւ արդյունավետությամբ, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ- ում.

բ) առկա լինեն բավարար միջոցներ՝ ԲՍՀՊ-ի իրականացման ծախսերը հոգալու համար.

գ) պահպանվեն քաղաքականություններն ու ընթացակարգերը եւ համապատասխան թվով որակավորված եւ փորձառու անձնակազմը՝ ԲՍՀՊ-ի իրականացման համար, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ-ում. եւ

դ) ԲՍՀՊ-ն կամ դրա որեւէ դրույթ չփոփոխվի, ուժը կորցրած չճանաչվի, չկասեցվի կամ չեղարկվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնություն է տալիս, ինչպես նշված է ԲՍՀՊ-ում, եւ ապահովի, որ ԲՍՀՊ-ն վերանայումից հետո անհապաղ հրապարակվի:

3. ԲՍՀՊ-ի եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

4. Վարկառուն պետք է ապահովի, որ՝

ա) ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ԲՍՀՊ-ում նշված հաճախականությամբ, ինչպես նաեւ առանձին հաշվետվությունում կամ հաշվետվություններում, եթե դա պահանջվում է Բանկի կողմից, հավաքագրելու, կազմելու եւ Բանկին տրամադրելու համար տեղեկություններ ԲՍՀՊ-ի եւ դրանում նշված բնապահպանական եւ սոցիալական գործիքների համապատասխանության կարգավիճակի մասին, բոլոր այդպիսի հաշվետվությունները՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, ի թիվս այլնի՝ i) ԲՍՀՊ-ի իրականացման կարգավիճակը, ii) պայմանները, եթե այդպիսիք կան, որոնք խոչընդոտում կամ սպառնում են խոչընդոտել ԲՍՀՊ-ի իրականացումը, եւ iii) ուղղիչ եւ կանխարգելիչ միջոցառումներ, որոնք ձեռնարկվել են, կամ պահանջվում է ձեռնարկել նման պայմանները հասցեագրելու համար. եւ

բ) Բանկն անհապաղ ծանուցվում է Նախագծի հետ կապված ցանկացած միջադեպի կամ արտակարգ իրավիճակի մասին, որն ունի կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հասարակության կամ աշխատողների վրա՝ համաձայն ԲՍՀՊ-ի,

դրանում նշված բնապահպանական եւ սոցիալական գործիքների եւ Բնապահպանական եւ սոցիալական ստանդարտների:

5. Վարկառուն ստեղծում, հրապարակում, պահպանում եւ գործարկում է բողոքարկման մատչելի մեխանիզմ՝ ստանալու եւ հեշտացնելու Նախագծի ազդակիր մարդկանց մտահոգությունների եւ բողոքների լուծումը եւ ձեռնարկի բոլոր անհրաժեշտ եւ նպատակահարմար միջոցները՝ Բանկի համար ընդունելի ձեւով՝ հասցեագրելու կամ հեշտացնելու համար այդպիսի մտահոգությունները եւ բողոքները:

6. Վարկառուն ապահովում, է, որ Նախագծի շրջանակներում քաղաքացիական աշխատանքների համար նախատեսված բոլոր մրցութային փաստաթղթերը եւ պայմանագրերը ներառեն կապալառուների, ենթակապալառուների եւ վերահսկող մարմինների պարտավորությունը՝ ա) համապատասխանեցնելու ԲՍՀՊ-ի համապատասխան ասպեկտներին եւ դրանում նշված բնապահպանական եւ սոցիալական գործիքներին. եւ բ) ընդունելու եւ կիրառելու վարքագծի կանոններ, որոնք պետք է տրամադրվեն եւ ստորագրվեն բոլոր աշխատողների կողմից՝ մանրամասնելով բնապահպանական, սոցիալական, առողջության եւ անվտանգության ռիսկերը, ինչպես նաեւ սեռական շահագործման եւ բռնության, երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների եւ բռնության ռիսկերը, որոնք կիրառելի են նշված պայմանագրերի համաձայն պատվիրված կամ իրականացվող քաղաքացիական աշխատանքների համար:

## **Բաժին II. <u>Ծրագրի մշտադիտարկման հաշվետվություն եւ գնահատում</u>**

### **Ա. Նախագծի հաշվետվություններ**

Վարկառուն պետք է Բանկին ներկայացնի Նախագծի յուրաքանչյուր հաշվետվություն յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օր հետո՝ ընդգրկելով օրացուցային կիսամյակը:

### Բ. Միջնաժամկետ ուսումնասիրություն

Վարկառուն՝ ա) մինչեւ Բանկի եւ Վարկառուի միջեւ գրավոր համաձայնեցված ամսաթիվը պատրաստում եւ Բանկին է ներկայացնում միջնաժամկետ հաշվետվություն այն մանրամասնությամբ, ինչպես ողջամտորեն պահանջում է Բանկը՝ փաստաթղթավորելով Նախագծի իրականացման առաջընթացը նման հաշվետվության ամսաթվին նախորդող ժամանակաշրջանում, հաշվի առնելով սույն Համաձայնագրի հիման վրա իրականացված մշտադիտարկման եւ գնահատման գործողությունների իրականացումը, այդ օրվան հաջորդող ժամանակահատվածում իր նպատակներին հասնելու նպատակով. եւ բ) Բանկի հետ միասին ուսումնասիրում է այդ միջնաժամկետ հաշվետվությունը՝ ոչ ուշ, քան այն ներկայացնելուց իննսուն (90) օր հետո, եւ այնուհետեւ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Նախագծի շարունակական արդյունավետ իրականացումն ու նպատակին հասնելն ապահովելու համար՝ հիմնվելով միջնաժամկետ հաշվետվության եզրակացությունների եւ առաջարկությունների վրա եւ տվյալ հարցի վերաբերյալ Բանկի տեսակետի վրա:

## Բաժին III. <u>Վարկի միջոցների ելքագրում</u>

### Ա. Ընդհանուր

Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների II հոդվածի դրույթները, Վարկառուն կարող է ելքագրել Վարկի միջոցները Նախագծի շրջանակներում թույլատրված ծախսերը կատարելու համար՝ համաձայն Հատկացման եւ ֆինանսավորման տեղեկատվական նամակի, հատկացված ամբողջ գումարի չափով կամ մինչեւ հետեւյալ աղյուսակի յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված տոկոսի չափով.

| Կատեգորիա | Հատկացված Վարկի գումարը (արտահայտված Եվրոյով) | Ֆինանսավորվող ծախսերի տոկոսը (բացառությամբ հարկերի) |
|---|---|---|
| 1) Ապրանքներ, | 68,800,000 | 53.3% |

| Կատեգորիա | Հատկացված Վարկի գումարը (արտահայտված եվրոյով) | Ֆինանսավորվող ծախսերի տոկոսը (բացառությամբ հարկերի) |
|---|---|---|
| աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստման եւ գործառնական ծախսեր Նախագծի 1.1(ա)(i), 1.1(ա)(iii), 1.2(ա), 1.2(գ)(i)(Բ), 1.2(գ)(i)(Գ), 1.2 (գ) (i) (Դ), 1.2(գ)(ii), 1.2(գ)(iii),1.2(գ)(v),1.2(դ)(i), 1.2(դ)(ii), 1.2(դ)(iii), 1.2(դ)(iv), 1.2(դ)(v),1.2(դ)(vi), 1.2(դ)(vii), 1.2 (դ)(ix), 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերի համաձայն | | |
| 2) Նախագծի 1.2 (բ) մասի համաձայն ՆՂԿ-ների համար թույլատրելի ծախսեր | 1,600,000 | ՆՂԿ-ներին հատկացված Վարկի մինչեւ 53.3%-ը, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի հավելումում |
| 3) Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ եւ վերապատրաստում Նախագծի 1.1(ա)(ii), 1.1(ա)(iv), 1.2(գ)(i)(Ա), 1.2(գ)(iv) եւ 1.2(դ)(viii) մասերի համաձայն | 0 | 0 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ | 70,400,000 | |

**Բ. Ելքագրման պայմաններ. Ելքագրման ժամկետ**

1. Վերոնշյալ Ա մասի դրույթներից անկախ՝ ելքագրում չի կատարվում՝

ա) մինչեւ ստորագրության ամսաթիվը կատարված վճարումների համար, կամ

բ) Կատեգորիա 2-ի համաձայն՝ սույն Հավելվածի հավելումում նշված յուրաքանչյուր ԱՀՊ-ի նկատմամբ, որի համար Վարկառուն ներկայացրել է ելքագրման հայտ՝ բացառությամբ այն դեպքերի, քանի դեռ եւ մինչեւ Վարկառուն

Բանկին չի ներկայացրել նշված փաստաթղթերը,

i) Անկախ ստուգման հաշվետվություն, որն ընդունելի է Բանկի համար, որը հաստատում է Վարկառուի կողմից սույն Հավելվածի հավելումում ամրագրված համապատասխան ԱՀՊ-ների ձեռքբերումը եւ հետագայում ներառվել է ՆԳՁ-ի ստուգման արձանագրության մեջ. եւ

ii) Անկախ աուդիտորի կողմից ստուգված ապացույցներ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ՝ ԱՀՊ-ների համար թույլատրելի ծախսերի մասին՝ առնվազն այս կատեգորիայի ներքո ելքագրված գումարի չափով, որը կատարվել է համապատասխան ԱՀՊ-ների ձեռքբերումների եւ համապատասխան ԱՀՊ արժեքների շրջանակներում:

2. Ինչ վերաբերում է Կատեգորիա 2-ի՝ ԱՀՊ-ների համար թույլատրելի ծախսերին, Վարկառուն կարող է պահանջել Բանկի ֆինանսավորումից կատարել ելքագրում, երբ կատարվել են համապատասխան ծախսերը, բայց նախքան ԱՀՊ-ների կատարումը՝ պայմանով, որ Վարկառուն i) կատարել է նման ԱՀՊ-ները ոչ ուշ, քան մինչեւ վերջնաժամկետը, եւ ii) Բանկին ներկայացրել է այնպիսի ապացույցներ, որոնք բավարար են Բանկի համար՝ համոզված լինելու, որ նման ԱՀՊ-ները կատարվել են ոչ ուշ, քան հատկացման վերջնաժամկետը:

3. Եթե մինչեւ հատկացման վերջնաժամկետը կամ դրանից առաջ Վարկառուն Բանկին չի տրամադրել բավարար ապացույց այն մասին, որ Կատեգորիա 2-ի հետ կապված ԱՀՊ-ները կատարվել են, Վարկառուն Բանկի ծանուցմամբ անհապաղ Բանկին է վերադարձնում այդ Կատեգորիա 2-ի հետ կապված ելքագրված Վարկի մնացորդը: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը այլ կերպ է որոշում, Բանկը չեղարկում է սույն Բաժնի համաձայն վերադարձված ցանկացած գումար:

4. Վերջնաժամկետը 2031 թվականի հունիսի 30-ն է:

## ՀԱՎԵԼՈՒՄ

## Արդյունքահեն պայմաններ

| Արդյունքահեն պայմաններ (ԱՀՊ) | ԱՀՊ արժեք |
|---|---|
| ԱՀՊ 1. Ակտիվների պահպանման հիմնադրամը ստեղծվել է Ջրառ-ի կողմից | Բանաձեւ. ամբողջությամբ վճարվում է ձեռքբերումից հետո: ԱՀՊ արժեք՝ €1,900,000 |
| ԱՀՊ 2. Մեծածավալ ոռոգման սակագնի մեթոդաբանությունը վերանայվել եւ ընդունվել է ՀԾԿՀ-ի կողմից | Բանաձեւ. ամբողջությամբ վճարվում է ձեռքբերումից հետո: ԱՀՊ արժեք՝ €110,000 |
| ԱՀՊ 3. Մշակվել եւ իրականացվել է ոռոգման սակագների իրականացման պլան՝ իր տեղեկատվական ռազմավարությամբ | Բանաձեւ. ամբողջությամբ վճարվում է ձեռքբերումից հետո: ԱՀՊ արժեք՝ €1,000,000 |
| **Ընդհանուր՝ ԱՀՊ արժեք** | €3,010,000 |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3

### Պարտավորությունների հետ կապված մայր գումարի հերթական մարման ժամանակացույց

Վարկառուն Վարկի մայր գումարը մարում է համաձայն հետեւյալ աղյուսակի, որը սահմանում է Վարկի մայր գումարի վճարման ամսաթվերը եւ Վարկի մայր գումարի ընդհանուր գումարի տոկոսը, որը ենթակա է վճարման յուրաքանչյուր մայր գումարի վճարման ամսաթվին (Վճարաչափ):

**Մայր գումարի հավասար բաժիններով մարումներ**

| **Մայր գումարի վճարման ամսաթիվ** | **Վճարաչափ** |
|---|---|
| Յուրաքանչյուր տարվա հունվարի 15 եւ հուլիսի 15<br>Սկսած 2035 թվականի հուլիսի 15-ից մինչեւ 2045 թվականի հունվարի 15-ը | 5% |

## ԱՌԴԻՐ

**Բաժին I.** **Սահմանումներ**

1. «Տարեկան աշխատանքային պլան» նշանակում է Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Գ բաժնում նշված պլանը, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի կողմից նախնական գրավոր առարկություն չներկայացնելու դեպքում:

2. «Հակակոռուպցիոն ուղեցույցներ» Ընդհանուր պայմանների Առդիրի 6-րդ պարբերության իմաստով նշանակում է 2006 թվականի հոկտեմբերի 15-ով թվագրված եւ 2011 թվականի հունվարի եւ 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ վերանայված՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի ու դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության եւ կոռուպցիայի կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի ուղեցույցները:

3. «Ակտիվների պահպանման հիմնադրամ» նշանակում է Վարկառուի հատուկ ֆոնդ՝ ոռոգման նոր արդիականացված սխեմաների պատշաճ շահագործման եւ պահպանման համար, Բանկի համար ընդունելի եղանակով եւ ձեւով, որը մշակվել է Նախագծի 1.2(գ)(i) մասի համաձայն:

4. «Կատեգորիա» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի III.Ա բաժնի աղյուսակում նշված կատեգորիա:

5. «Համաֆինանսավորող» նշանակում է Զարգացման ֆրանսիական գործակալություն:

6. «Համաֆինանսավորում» Ընդհանուր պայմանների Առդիրի 17-րդ պարբերության իմաստով նշանակում է ֆինանսավորում, որը տրամադրվում է Համաֆինանսավորողի կողմից՝ Ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

7. «Համաֆինանսավորման համաձայնագիր» նշանակում է

համաֆինանսավորում նախատեսող Վարկառուի կողմից Վարկառուի եւ Համաֆինանսավորողի միջեւ կնքվող համաձայնագիր:

8. «ԱՀՊ-ի համար նախատեսված թույլատրելի ծախսեր» նշանակում է թույլատրելի ծախսերի ցանկ՝ բաղկացած խորհրդատվական ծառայություններից, ոչ խորհրդատվական ծառայություններից, վերապատրաստման եւ գործառնական ծախսերից, որոնք Վարկառուն կրել է Վարկառուի բյուջետային գործընթացների համաձայն, որոնք աջակցում են Նախագծի գործողությունների իրականացմանը՝ ԱՀՊ-ներին համապատասխանելու համար:

9. «Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլան» կամ «ԲՍՀՊ» նշանակում է Նախագծի բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլան՝ թվագրված 2025 թվականի մայիսի 8-ով, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել դրա դրույթներին համապատասխան, որով սահմանվում են այն հիմնական միջոցներն ու գործողությունները, որոնք Ստացողն իրականացնում է կամ որոնց իրականացումն ապահովում է Գործողություններից ծագող հնարավոր բնապահպանական եւ սոցիալական ռիսկերը եւ ազդեցությունները հասցեագրելու համար, ներառյալ՝ գործողությունների եւ միջոցառումների ժամանակացույցը, ինստիտուցիոնալ, անձնակազմի համալրման, վերապատրաստման, մշտադիտարկման եւ զեկուցման մեխանիզմները եւ դրանց շրջանակներում կազմվող ցանկացած բնապահպանական եւ սոցիալական բնույթի փաստաթուղթ:

10. «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշներ» կամ «ԲՍՉ» միասին նշանակում է՝ i) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 1. Բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցությունների գնահատում եւ կառավարում», ii) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 2. Աշխատանք եւ աշխատանքային պայմաններ», iii) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 3. Ռեսուրսների արդյունավետություն եւ աղտոտման կանխարգելում եւ կառավարում», iv) «Բնապահպանական եւ սոցիալական

չափանիշ 4.Համայնքի առողջություն եւ անվտանգություն», v) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 5. Հողի ձեռքբերում, հողօգտագործման հետ կապված սահմանափակումներ եւ հարկադիր վերաբնակեցում», vi) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 6. Կենսաբազմազանության պահպանում եւ կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում», vii) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 7. Բնիկ ժողովուրդներ/Ենթասահարային Աֆրիկայի պատմականորեն անապահով ավանդական տեղական համայնքներ», viii) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 8. Մշակութային ժառանգություն», ix) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 9. Ֆինանսական միջնորդներ», x) «Բնապահպանական եւ սոցիալական չափանիշ 10. Շահառուների ներգրավում եւ տեղեկությունների բացահայտում», գործում է 2018 թվականի հոկտեմբերի 1-ից, Բանկի հրապարակմամբ:

11. «Ֆինանսական կառավարման ձեռնարկ» նշանակում է ձեռնարկ, որն ընդունվում է Վարկառուի կողմից որպես ՆԳԶ-ի մաս, Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ եղանակով, որը ներառում է Նախագծի ֆինանսական կառավարման միջոցառումները եւ վերահսկողությունը, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

12. «Բանաձեւ» նշանակում է հատկացումների հաշվարկման միջոց ԱՀՊ-ների կատարման համեմատությամբ, ինչպես նախատեսված է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի հավելումում:

13. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները՝ ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային նախագծի ֆինանսավորման համար, թվագրված 2018 թվականի դեկտեմբերի 14-ով (վերջին անգամ վերանայվել է

2023 թվականի հուլիսի 15-ին), սույն Առդիրի II բաժնում նշված փոփոխություններով:

14. «Աշխարհագրական տեղեկատվական համակարգ» կամ «ԱՏՀ» նշանակում է համակարգչային համակարգ, որը վերլուծում եւ ցուցադրում է աշխարհագրական տեղակայմամբ [կապակցմամբ] տեղեկություններ:

15. «Անկախ ստուգում իրականացնող գործակալ» նշանակում է խորհրդատու կամ խորհրդատվական ընկերություն, որն ընտրվում է մրցակցային կարգով, ներգրավվում եւ պահվում է Վարկառուի կողմից՝ համաձայն սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Ե բաժնի:

16. «Անկախ ստուգման հաշվետվություն» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Ե.1(բ) բաժնում նշված տարեկան հաշվետվություններից յուրաքանչյուրը:

17. «Ենթակառուցվածքների եւ ծառայությունների բարելավումներ» նշանակում է գործողություններ, որոնք իրականացվում են համապատասխան Նախագծի 2.2(բ) մասի՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Դ.1 բաժնի եւ ՆԳՁ-ի համաձայն:

18. «Ջրօգտագործողների ընկերությունների եւ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին օրենք» նշանակում է Վարկառուի օրենքը ջրօգտագործողների ընկերությունների եւ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին՝ թվագրված 2002 թվականի հուլիսի 1-ով:

19. «ԲՄՄ ծրագիր» նշանակում է բազմափուլ ծրագրային մոտեցմամբ ծրագիր, որը նախատեսված է Հայաստանի ընտրված տարածքներում ապահովելու բարելավված ոռոգման ծառայությունների եւ անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների հասանելիություն:

20. «Էկոնոմիկայի նախարարություն» նշանակում է Վարկառուի

տնտեսության համար պատասխանատու նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

21. «Շրջակա միջավայրի նախարարություն» նշանակում է Վարկառուի շրջակա միջավայրի համար պատասխանատու նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

22. «Ֆինանսների նախարարություն» նշանակում է Վարկառուի ֆինանսների համար պատասխանատու նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

23. «Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն» կամ «ՏԿԵՆ» նշանակում է Վարկառուի նախարարությունը, որը պատասխանատու է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների համար, ներառյալ՝ ջրային համակարգի կառավարումը, կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար՝ Նախագծի իրականացման նպատակով:

24. «Ոռոգման ազգային գլխավոր պլան» նշանակում է Վարկառուի ոռոգման գլխավոր պլան՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, որը մշակվել է Նախագծի 1.1(ա)(iv) մասի համաձայն:

25. «Ոռոգման ազգային ռազմավարություն» նշանակում է Վարկառուի ոռոգման ռազմավարություն՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, որը մշակվել է Նախագծի 1.1(ա)(ii) մասի համաձայն:

26. «Ջրի ազգային ռազմավարություն» նշանակում է Վարկառուի ջրային ռազմավարություն՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, որը մշակվել է Նախագծի 1.1(ա)(i) մասի համաձայն:

27. «Ջրամատակարարման եւ ջրահեռացման ազգային ռազմավարություն» նշանակում է Վարկառուի ջրամատակարարման եւ ջրահեռացման ազգային ռազմավարություն՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, որը

մշակվել է Նախագծի 1.1(ա)(iii) մասի համաձայն:

28. «ԳՔ 7.50» նշանակում է Բանկի քաղաքականությունը միջազգային ջրային ուղիների ծրագրերի վերաբերյալ, որը հասանելի է https://thedocs.worldbank.org/en/doc/152e7cea903188446911a1186487f511-0290012023/original/OP-ProjectationalsW50:

29. «Գործառնական ծախսեր» նշանակում է Բանկի կողմից հաստատված ողջամիտ ծախսեր՝ Նախագծի իրականացման արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսերի համար, որոնք այն ծախսերն են, որոնք չէին կատարվի Նախագծի բացակայության դեպքում՝ բաղկացած հաղորդակցման, գրասենյակային ծախսերի եւ սպասարկման, սարքավորումների սպասարկման հետ կապված ծախսերից, կոմունալ վճարումներից, փաստաթղթերի պատճենահանման կամ տպագրության, սպառվող նյութերի, թարգմանության եւ բանավոր թարգմանության հետ կապված ծախսերից, Նախագծի աշխատակիցների ճանապարհորդության եւ օրապահիկի ծախսերից՝ կապված Նախագծի իրականացման հետ (բացառությամբ վերապատրաստման շրջանակներում իրականացված ծախսերի), գրասենյակի վարձավճարը եւ Վարկառուի Նախագծի իրականացման հետ կապված ցանկացած այլ ծախս, եթե նշված բոլոր ծախսերը ընդունելի են Բանկի համար եւ չեն ներառում Վարկառուի աշխատակիցների (ներառյալ՝ ՆԻԽ-ում նշանակվածների, եթե դա կիրառելի է), ինչպես նաեւ անդամ երկրի քաղաքացիական ծառայության պաշտոնյաների աշխատավարձերը եւ այլ վճարներ:

30. «ԱՀՊ արժեք» նշանակում է յուրաքանչյուր ԱՀՊ-ի հատկացված Վարկի ընդհանուր գումարը, ինչպես նշված է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի հավելման աղյուսակում, քանի որ այդ գումարը կարող է ամբողջությամբ կամ մասամբ վերաբաշխվել ԱՀՊ-ների կամ Կատեգորիաների միջեւ՝ Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ ծանուցելով Վարկառուին:

31. «Արդյունքահեն պայմաններ» կամ «ԱՀՊ» նշանակում է պայմանների մի շարք, որոնք ձեռք են բերվում Նախագծի շրջանակներում՝ Նախագծի 1.1 մասի

իրականացման միջոցով, ինչպես նշված է սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի հավելումում. եւ «ԱՀՊ» նշանակում է այդպիսի ԱՀՊ-ներից յուրաքանչյուրը:

32. «Գնումների կանոնակարգեր» Ընդհանուր պայմանների Առդիրի 85-րդ պարբերության իմաստով նշանակում է Համաշխարհային բանկի գնումների կանոնակարգեր՝ ՆՆՖ վարկառուների համար՝ թվագրված 2025 թվականի փետրվարով:

33. «Նախագծի իրականացման խումբ» կամ «ՆԻԽ» նշանակում է Նախագծի իրականացման համար նախատեսված խումբ, որը պետք է ստեղծվի Վարկառուի կողմից՝ ՋԿ-ի ներքո՝ համաձայն սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Ա.3 բաժնի:

34. «ՆԳՁ» նշանակում է ձեռնարկ, որը պետք է ընդունվի Վարկառուի կողմից՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ եղանակով, եւ համաձայն սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Բ բաժնի, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր հաստատմամբ:

35. «Նախագծի ղեկավար կոմիտե» կամ «ՆՂԿ» նշանակում է ղեկավար կոմիտե, որը պետք է ստեղծվի Վարկառուի կողմից՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Ա.2 բաժնի համաձայն:

36. «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով» կամ «ՀԾԿՀ» նշանակում է Ստացողի կարգավորող հանձնաժողով, որը պատասխանատու է հանրային ծառայությունների համար, կամ դրա իրավահաջորդը:

37. «Ընտրված ոռոգման համակարգերի վերականգնում կամ արդիականացում» նշանակում է գործողություններ, որոնք պետք է իրականացվեն Նախագծի 3.1(բ) մասի համաձայն՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Դ.2 բաժնին եւ ՆԳՁ-ին համապատասխան:

38. «ԳՋՋ» նշանակում է գյուղական ջրամատակարարում եւ ջրահեռացում:

39. «Հայաստանի ընտրված տարածքներ» նշանակում է Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Տավուշի *մարզերում* եւ Երեւանում գտնվող տարածքները:

40. «Ընտրված ոռոգման համակարգեր» նշանակում է ոռոգման համակարգեր, որոնք պետք է ընտրվեն վերականգնման կամ արդիականացման համար Նախագծի 3.1 մասի համաձայն՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Դ.1 բաժնում եւ ՆԳՁ-ում սահմանված չափանիշներին համապատասխան:

41. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է այն երկու ամսաթվերից վերջինը, որ Վարկառուն եւ Բանկը ստորագրել են սույն Համաձայնագիրը, եւ նման սահմանումը կիրառվում է Ընդհանուր պայմանների «Վարկային համաձայնագրի ամսաթիվ» բոլոր հղումների նկատմամբ:

42. «Վերապատրաստում» նշանակում է Նախագծի շրջանակներում անցկացվող վերապատրաստումների եւ աշխատաժողովների համար Բանկի կողմից հաստատված ողջամիտ ծախսերը, ներառյալ՝ վերապատրաստման մասնակիցների ուսման վճարները, ճանապարհածախսը եւ ցանկացած օրական փոխհատուցման ծախս, վերապատրաստող մասնագետների եւ բանախոսների ծառայությունների ապահովման, վերապատրաստման եւ աշխատաժողովների անցկացման համար նախատեսված տարածքների վարձակալության, վերապատրաստման նյութերի նախապատրաստման եւ բազմացման հետ կապված ծախսերը եւ այլ ծախսեր, որոնք ուղղակիորեն կապված են վերապատրաստման դասընթացի կամ աշխատաժողովի նախապատրաստման եւ իրականացման հետ (բայց բացառությամբ ապրանքների եւ խորհրդատվական ծառայությունների):

43. «Ջրային օրենսգիրք» նշանակում է Վարկառուի ջրային օրենսգիրքը՝ թվագրված 2002 թվականի հունիսի 4-ով:

44. «Ջրային կոմիտե» կամ «ՋԿ» նշանակում է Վարկառուի կոմիտե՝ ՏԿԵՆ-ի ենթակայության ներքո, որը պատասխանատու է ջրային համակարգերի

համար, կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար՝ Նախագծի իրականացման նպատակով:

45. «Ջրօգտագործողների ընկերություններ» կամ «ՋՕԸ-ներ» նշանակում է Վարկառուի օրենսդրությանը համապատասխան գրանցված եւ գործող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք պատասխանատու են Վարկառուի տարածքում ոռոգման ջրի բաշխման համար, կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար՝ Նախագծի իրականացման նպատակով:

46. «Ջրամատակարարման գործակալություն» կամ «Ջրառ» նշանակում է Վարկառուի փակ բաժնետիրական ընկերություն՝ ՏԿԵՆ-ի ենթակայության ներքո, որը նշանակված է որպես մեծածավալ ջրամատակարար՝ ամբողջ երկրում ՋՕԸ-ներին ոռոգման ջուր մատակարարելու համար, կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար՝ Նախագծի իրականացման նպատակով:

47. «ՋՋ» նշանակում է ջրամատակարարում եւ ջրահեռացում:

**Բաժին II.** **<u>Ընդհանուր պայմանների փոփոխություններ</u>**

Ընդհանուր պայմանները սույնով փոփոխվում են հետեւյալ կերպ.

1. Բաժին 3.01 (*Առաջնային վճար. Պարտավորությունների վճար. Ռիսկի ազդեցության հավելավճար* ) փոփոխվել է հետեւյալ կերպ.

«Բաժին 3.01. *Առաջնային վճար, պարտավորությունների վճար*

ա) Վարկառուն Բանկին վճարում է Վարկի գումարի առաջնային վճար՝ Վարկային համաձայնագրում նշված դրույքաչափով: Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված չէ 2.07(բ) բաժնում, Վարկառուն առաջնային վճարը վճարում է ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան վաթսուն (60) օր հետո:

բ) Վարկառուն Բանկին վճարում է չելքագրված Վարկի մնացորդի պարտավորությունների վճար՝ Վարկային համաձայնագրով սահմանված դրույքաչափով: Պարտավորության վճարը հաշվարկվում է Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվից կամ Բանկի կողմից Վարկի հաստատման օրվանից չորս տարին լրանալու օրվանից, որն ավելի ուշ ամսաթիվ է, մինչեւ համապատասխան ամսաթվերը, երբ Վարկառուի կողմից գումարները ելքագրվում են Վարկային հաշվից կամ չեղարկվում: Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված չէ 2.07(գ) բաժնում, Վարկառուն Պարտավորության վճարը վճարում է կես տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր վճարման օրը:»:

2. Բաժին 3.04 (*Կանխավճար* ) փոփոխվել է հետեւյալ կերպ.

«Բաժին 3.04. *Կանխավճար*

ա) Բանկին ոչ պակաս, քան քառասունհինգ (45) օր առաջ ծանուցելուց հետո Վարկառուն կարող է մարել Բանկին հետեւյալ գումարները մարման ժամկետից շուտ՝ Բանկի համար ընդունելի ամսաթվի դրությամբ (պայմանով, որ Վարկառուն վճարել է բոլոր Վարկի վճարումները այդ ամսաթվի դրությամբ). i) Վարկի ելքագրված գումարի ամբողջ մնացորդը տվյալ օրվա դրությամբ, կամ ii) Վարկի մեկ կամ մի քանի մարման ժամկետների ամբողջ մայր գումարը: Ելքագրված Վարկի մնացորդի ցանկացած մասնակի կանխավճար կիրառվում է Վարկառուի կողմից սահմանված կարգով կամ Վարկառուի կողմից որեւէ հստակեցման բացակայության դեպքում՝ հետեւյալ կերպ. Ա) եթե Վարկային պայմանագիրը նախատեսում է Վարկի հիմնական գումարի որոշակի հատկացված գումարների առանձին մարում, ապա կանխավճարը կիրառվում է այդ հատկացված գումարների հակառակ հերթականությամբ՝ առաջինը մարելով վերջին անգամ ելքագրված հատկացված գումարը եւ առաջինը մարելով նշված հատկացված գումարի ավելի ուշ մարման ժամկետով հատկացված գումարը. եւ Բ) բոլոր մյուս դեպքերում կանխավճարը կիրառվում է Վարկի մարման ժամկետների հակադարձ հերթականությամբ, ընդ որում, նախ մարվում է այն մասը, որն ունի ավելի ուշ մարման ժամկետ:

բ) Եթե կանխավճարման ենթակա Վարկի որեւէ գումարի առնչությամբ փոխակերպում է իրականացվել, եւ փոխակերպման ժամկետը չի դադարեցվել կանխավճարի պահին, ապա կիրառվում են 4.06 բաժնի դրույթները:»:

3. Առդիրի սկզբնապես համարակալված 75-րդ եւ 81-րդ պարբերություններում համապատասխանաբար «Վարկի վճարում» եւ «Վճարման ամսաթիվ» տերմինները փոփոխվել են հետեւյալ կերպ.

«75. «Վարկի վճարում» նշանակում է ցանկացած գումար, որը Վարկի Կողմերը պետք է վճարեն Բանկին՝ համաձայն իրավական պայմանագրերի, ներառյալ (բայց չսահմանափակվելով) Ելքագրված Վարկի մնացորդը, տոկոսները, սկզբնական վճարը, պարտավորությունների վճարը, տոկոսադրույքը՝ ժամկետանց տոկոսի չափով (եթե այդպիսիք կան), ցանկացած հավելավճար, ցանկացած գործարքի վճար՝ փոխակերպման իրականացման կամ դրա վաղաժամ դադարեցման համար, տոկոսադրույքի առավելագույն սահմանաչափ կամ տոկոսադրույքի միջակայք սահմանելու դեպքում վճարման ենթակա ցանկացած վճար, ինչպես նաեւ Վարկառուի կողմից վաղաժամ դադարեցման փոխհատուցման գումարը:»:

«81. «Վճարման ամսաթիվ» նշանակում է Վարկային համաձայնագրում նշված յուրաքանչյուր ամսաթիվ, որը Վարկային համաձայնագրի կնքման ամսաթիվն է կամ տոկոսների, պարտավորությունների վճարի եւ Վարկի այլ վճարների ու տուրքերի (բացի առաջնային վճարից) համապատասխանաբար վճարման ամսաթիվը:»:

4. Սահմանումները նշված 4-րդ պարբերությունում (բաշխված գերազանցող ռիսկի հավելավճար), 53-րդ պարբերությունում (ռիսկի ազդեցության հավելավճար), 99-րդ պարբերությունում (ստանդարտ ռիսկի սահմանաչափ) եւ 105-րդ պարբերությունում (ընդհանուր ռիսկի ենթարկվածություն) ջնջվում են ամբողջությամբ, իսկ հաջորդ պարբերությունները համապատասխանաբար վերահամարակալվում են: